Արձանագրություն N 4
«ԵՔ-ԳՀԾՁԲ-19-200» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05.11.2019 թ.
Ժամը 12:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հարությունյան , Ա. Սարգսյան,
Կ. Հարությունյան, Ռ. Աբրահամյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ.Հովեսյան

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված եզրակացության և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի «Շինկենտրոն» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

1.2 Էլեկտրոնային կայքի միջոցով «Շինկենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած որակավորման փաստաթղթերը թերի են և չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

2. Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ որոշեց, նիստը կասեցնել և առաջարկել «Շինկենտրոն» ՓԲԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

2.1 Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2.2 Չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

2.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել երեք աշխատանքային օր հետո, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Կիրակոսյան

_____ Ա. Հարությունյան

Անդամներ՝ _____ Ա. Սարգսյան

_____ Կ. Հարությունյան

_____ Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ _____ Թ. Հովեսյան